կիցն հաւացեալ [ա] ի Տրդատա քաջէ։

Եւ երկրպագեալ սուրբ տեղեացն, և ընծայեալ նշխարաց առաքելոցն Տեառն, որ և անուամբ նոցա յորջորջի. ուր էր վարժեալ Մովսէս և աւծեալ Ահարոն։ Եւ իսկոյն եկանէին և տեսանէին զաստուածաբնակ տեղին՝ և զհրեշտակացն բանակն. զանմարմնաւորսն և զանարիւն արիւնաւորսն, զլուարթագոյն զլուարթունսն՝ և զկենդանի նահատակսն. որք թըւովք էին հարիւրք եւթն կուսանքն և կատարեալքն, որք ի մի սեղանոյ վաելէին։ Եւ էր վաելումն սեղանոյն զոր նախահայրն հրամնեցաւ յետ յանցանելոյն, և ընպելլի ինքնաբուխն։ Եւ արիւնաւոր կերակուր ոչ մըտանէր ի վանս նոցա. և էր սահման նոցա կանոնքն Բարսղի. և ոչ էր ի մէջ նոցա իմ և քոյ ըստ առաքելոցն աւրինաց։ Եւ թէպէտ և գոյին գեաւղք և աւանք նուիրեալք ի թագաւորացն՝ զայն որբոց և այրեաց՝ ուրկաց և անցաւորաց ընձեռէին, և ինքնաձեռն արուեստիւն շատանային ըստ Տեառն և առաքելոյ։

Զոր տեսեալ արքային՝ հայրապետին, և վարդապետին՝ սքանչանային, և հիացեալ տային փառս խնամողին և արարչին նոցա. և նաէին

ա. Այս բառը երկրորդ անգամն է պատահում։